

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Մարտի 3-ին, ուրբաթ.—Այսօր, ժամը 13.30-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում դասախոսում է «Էջմիածին» ամսագրի խմբագիր և հոգևոր ճեմարանի դասախոս Արթուն Հատիտյանը, որը Մայր Աթոռի միաբաններին և ճեմարանի ուսանողությանն է ներկայացնում սույն թվականի հունվարի 29-ից փետրվարի 9-ը Վեհափառ Հայրապետի՝ դեպի Իրաք կատարած հովվապետական ուղևորության տպավորությունները:

Հարգելի բանախոսի զրույցը բաղկանում էր երեք մասերից. պատմական Միջագետքը (Ասորեստան և Բաբելոն), Իրաքի հայ համայնքը (ծագումն ու պատմությունը) և Իրաքն այսօր՝ իր ազգային-պատմական վերազարթոնքի ճանապարհին:

Զրույցի ավարտին բանախոսը պատասխանում է ներկաներից ոմանց հարցերին:

* * *

Նույն օրը, երեկոյան ժամը 19-ին, Երևանի հայրապետական վիլլայում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

* * *

Մարտի 5-ին, կիրակի.—Ե կիրակի բառասնորդական պահոց (Դատաւորին).

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Անանիա վրդ. Արաբաջյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզում է տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը՝ «Ոչ եթէ անիրաւ ինչ է Աստուած՝ մոռանալ զգործս ձեր և զսէրն զոր ցուցէք յանուն նորա» (Եբր. Զ 10) բնաբանով:

* * *

Մարտի 8-ին, չորեքշաբթի.—Այսօր Մայր Աթոռում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական ընդլայնված հավաքույթ, որին մասնակցում են նաև ներքին թեմերի թեմակալ առաջնորդներն ու հոգևոր հովիվները և ս. Գևորգ վանքի միաբանությունը:

Առավոտյան ժամը 9-ին Մայր տաճարում, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվում է Արևագալի ժամերգություն, ուր քարոզում է Մայր Աթոռի միաբան տ. Մասիս վրդ. Գալստյանը՝ «Լուսաւոր բո, Քրիստոս ամենեքեան լուսաւորեցաք, և ի սուրբ խաչ բո, Փրկիչ, հաւատացեալքս ապաւինեցաք» (Արևագալի մաղթանք) բնաբանով:

* * *

Նույն օրը, ժամը 13-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում գումարվում է միաբանական հավաքույթի Ա

նիստը, որի ժամանակ հոգևոր ճեմարանի դասախոս և «Էջմիածին» ամսագրի խմբագրության քարտուղար տ. Անանիա վրդ. Արաբաջյանը կարդում է «Եզնիկ Կողբացին ընդդեմ հնագույն փիլիսոփաների և քրիստոնեական հերետիկոսների» թեմայով իր դասախոսությունը:

Բանախոսությունից հետո, ժամը 15-ին, Մայր Աթոռի վանական սեղանատանը տրվում է ճաշկերույթ:

Երեկոյան ժամը 20.30-ին Վեհարանում գումարվում է միաբանական հավաքույթի Բ նիստը՝ նախագահությամբ Վեհափառ Հայրապետի, որը ներկաներին պատմում է վերջերս Իրաք և Ֆրանսիա կատարած Իր հովվապետական ուղևորության տպավորությունների մասին՝ միաժամանակ վեր հանելով այն մեծ դերը, որ այսօր ունի հայ հոգևորականը մանավանդ սփյուռքի մեջ նաև հայապահպանման դժվարին գործում:

Նիստի վերջում Վեհարանի հանդիսության մեծ դահլիճում ժողովի մասնակիցները դիտում են «Վեհափառ Հայրապետը Հռոմում» (1970 թ.) և «Մյուռոնօրհնություն» (1976 թ.) ֆիլմերը:

*
* *

Մարտի 9-ին, հինգշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 18-ին, Մայր տաճարում, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվում է Խաղաղականի ժամերգության կարգը: Ավետարանի ընթերցումից առաջ քարոզում է Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը՝ «Օրհնեսցուք զՏէր յամենայն ժամ, յամենայն ժամ, օրհնութիւն նորա ի բերան մեր» (Սաղմոս) բնաբանով:

Ժամերգությունից հետո եկեղեցական թափորն առաջնորդվում է Վեհարան, ուր բոլոր միաբաններն աջահամբույրով հրաժեշտ են առնում Վեհափառ Հայրապետից ու մեկնում իրենց պաշտոնատեղիները:

*
* *

Մարտի 11-ին, շաբաթ.—Տօն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ սոսկալի չարչարանացն և մտին ի Վիրապն.

Այսօր Մայր տաճարում, Իշման ս. սեղանի առաջ, պատարագ է մատուցում տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը:

*
* *

Մարտի 12-ին, կիրակի.—Զ կիրակի քառասնորդական պահոց (Գալստեան).

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մասիս վրդ. Գալստյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը ս. Գրիգոր Լուսավորչի կյանքի և առաքելական գործունեության մասին՝ «Մերոյ լուսաւորութեան լուսաւոր վերակացու» (Մ. Խորենացու Պատմությունից վերցրած) բնաբանով:

*
* *

Մարտի 15-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 20.30-ին, Վեհարանում տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռի միաբանությանը ծանոթացնում է վերջերս ֆրանսերեն լեզվով հրատարակված «Նոր աղանդներ» գրքին (հեղինակ՝ Ալլան Վուդրոու): Ապա տեղի է ունենում մտքերի փոխանակություն՝ վերջին ժամանակներս եկեղեցու ծոցում հանդես եկած աղանդավորական շարժումների մասին:

*
* *

Մարտի 17-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

Սույն նիստին հրավիրվել էր Մայր Աթոռի ֆինանսական բաժնի վարիչ Գառնիկ Քեհյայանը, որը հանգամանորեն զեկուցում է 1977 թվականի Մայր Աթոռի բյուջեի կատարողականի և 1978 թվականի նոր բյուջեի նախահաշվի մասին:

Գերագույն հոգևոր խորհուրդը հանգամանորեն զբաղվում է 1977 թվականի Մայր Աթոռի բյուջեի կատարողականի և 1978 թվականի նոր բյուջեի նախահաշվի քննությամբ:

Գերագույն հոգևոր խորհուրդը, հաստատելով Մայր Աթոռի բյուջեի կատարողականն ու նոր նախահաշիվը, իր գնահատանքն է արձանագրում Մայր Աթոռի գլխավոր հաշվապահ Գառնիկ Քեհյայանի բարեխիղճ և աթոռանվեր աշխատանքի մասին:

Գերագույն հոգևոր խորհրդի սույն նիստին հրավիրվել էր նաև Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետ Արծրուն Գալիկյանը, որը ներկայացնում է Մայր Աթոռի 1978 թվականի շինարարական աշխատանքների ծրագրերը, որոնք կատարվելու են Մայր Աթոռում, Երևանի ս. Սարգիս եկեղեցում, ս. Գեղարդ վանքում և Խորվիրապում:

Գերագույն հոգևոր խորհուրդը հաստատում է 1978 թվականի Մայր Աթոռի շինարարական ծրագիրը և իր գոհունակությունն արձանագրում ճարտարապետ Արծրուն Գալիկյանի ազնիվ և բարեխիղճ աշխատանքի համար։

Այնուհետև ընթերցվում է Գերագույն հոգևոր խորհրդին առընթեր Մայր Աթոռի Վերստուգիչ հանձնաժողովի զեկուցագիրը (նախագահ՝ Եփրեմ Ալեքսանյան)՝ Մայր Աթոռի ֆինանսական, շինարարական աշխատանքների մասին։

Գերագույն հոգևոր խորհուրդն այս անգամ ևս արձանագրելով իր գոհունակությունը Վերստուգիչ հանձնաժողովի կատարած ազնիվ և օգտակար աշխատանքների համար՝ հաստատում է զեկուցագրի մի շարք թելադրությունները և հրահանգում ֆինանսական և շինարարական բաժինների վարիչներին՝ նկատի առնել դրանք այս տարվա իրենց ընթացիկ գործնական աշխատանքներում։

*
* *

Մարտի 19-ին, կիրակի.—Ծաղկազարդ.
Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Արսեն եպս. Բերբերյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում՝ «Այսօր զուարճացան տիեզերք գալստեամբ Աստուածորդւոյն յԵրուսաղէմ և գոչէին հրճւմամբ երգով, օրհնեա՛լ եկեալ անուամբ Տեառն» (Ծաղկազարդի շարական) բնաբանով։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

*
* *

Նույն օրը, երեկոյան ժամը 17.30-ին, Մայր տաճարում տեղի է ունենում Դռնբացեքի արարողությունը՝ տ. Արսեն եպս. Բերբերյանի գլխավորությամբ։

*
* *

Մարտի 23-ին, հինգշաբթի.—Աւագ հինգշաբթի.
Այսօր, առավոտյան, Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մուշեղ վրդ. Սարգսյանը։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

*
* *

Նույն օրը, երեկոյան ժամը 17-ին, Մայր տաճարում Վեհափառ Հայրապետը կատարում է Ոտնլվայի կարգը։

Ոտնլվայից հետո, ժամը 19.30-ին, սկսվում է մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Սուսկալի չարչարանաց և Խաչելության հիշատակին նվիրված Ավագ ուրբաթի արարողությունը։ «Փառք ի բարձունս»-ից հետո քարոզում է Վեհափառ Հայրապետը՝ «Գիշեր խաւարման, գիշեր լացի» բնաբանով։

*
* *

Մարտի 24-ին, ուրբաթ.—Աւագ ուրբաթ.
Այսօր, երեկոյան ժամը 16-ին, Մայր տաճարում կատարվում է թաղման կարգը և ապա Թափոր թաղմանն՝ հանդիսադրությամբ Վեհափառ Հայրապետի, Մայր տաճարի շուրջ եռադարձ թափորով։

*
* *

Մարտի 25-ին, շաբաթ.—Աւագ շաբաթ. Ճրագալոյց Զատկի։
Այսօր, երեկոյան, Մայր տաճարում Ճրագալույցի պատարագ է մատուցում տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Ս. պատարագից առաջ հոգևոր ճեմարանի սաներն ընթերցում են Դանիելի գիրքը։ Հավարտ պատարագի Մայր Աթոռի միաբանությունը Վեհարանում շնորհավորում է Նորին Սրբությանը Զատկի նախատոնակի առթիվ։

Երեկոյան ժամը 20-ին Մայր Աթոռի միաբանական սեղանատանը տեղի է ունենում նավակատիքի ավանդական ընթրիք։

* *
*

Մարտի 27-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց.
Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բեյլերյանը։

Ս. պատարագի ավարտին կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ «վասն հանգուցելոց»... «վասն համօրէն ննջեցելոց»։